Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԻ

ք. Երևան 21 ապրիլի, 2023թ.

Ժողովի նախագահ՝
Ս. Սուքիասյան - Խորհրդի նախագահ

Ժողովի քարտուղար՝
Լ. Պետրոսյան - Խորհրդի անդամ, Քարտուղար

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ /այսուհետ՝ բանկ/ հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովը կայացավ 2023թ. ապրիլի 21-ին՝ Խորհրդի նախագահ Ս. Սուքիասյանի նախագահությամբ:
Բանկի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել էր 2023թ. փետրվարի 28-ի դրությամբ՝ ըստ բաժնետերերի ռեեստրի տվյալների:
Համաձայն Հաշվիչ հանձնաժողովի ներկայացված տվյալների՝ Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը կազմում է 2,001,710 ձայնի իրավունք տվող բաժնետոմս, որից քվեարկությանը մասնակցել են 1,530,024 ձայնի իրավունք տվող բաժնետոմս կամ բաժնետոմսերի ընդհանուր թվաքանակի 76.44%-ը:
Բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի քվեարկությանն էին դրված հետևյալ հարցերը.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովի կազմի վերաբերյալ,
2. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ սովորական բաժնետոմսերի բաժանման վերաբերյալ՝ 1 բաժնետոմսը = 5 բաժնետոմս համամասնությամբ,
3. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրության լրամշակված տարբերակի վերաբերյալ:

Քվեարկության ամփոփման արդյունքում հաշվիչ հանձնաժողովի թիվ 2 Արձանագրության տվյալները հետևյալն են.

1.«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովի կազմի վերաբերյալ:

Քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 1,528,993 ձայն կամ մասնակիցների ձայների 99.933%
Դեմ՝ 1000 ձայն կամ մասնակիցների ձայների 0.065%
Ձեռնպահ՝ 31 ձայն կամ մասնակիցների ձայների 0.002%
Անվավեր՝ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%

Ելնելով քվեաթերթիկներով կատարված քվեարկության արդյունքներից՝

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովի կազմը հետևյալ տեսքով.
Նախագահ՝ Ա. Խաչատրյան
Անդամներ՝ Ա. Աղամյան, Ե. Ալեքսանյան
Լիազորությունների ժամկետը սահմանել մեկ տարի:

2. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ սովորական բաժնետոմսերի բաժանման վերաբերյալ՝ 1 բաժնետոմսը = 5 բաժնետոմս համամասնությամբ:

Քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 1,529,024 ձայն կամ մասնակիցների ձայների 99.935%
Դեմ՝ 1000 ձայն կամ մասնակիցների ձայների 0.065%
Ձեռնպահ՝ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%
Անվավեր՝ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%

Ելնելով քվեաթերթիկներով կատարված քվեարկության արդյունքներից՝

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

2. Իրականացնել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ սովորական բաժնետոմսերի բաժանում՝ 1 բաժնետոմսը = 5 բաժնետոմս համամասնությամբ:

3. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրության լրամշակված տարբերակի վերաբերյալ:

Քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 1,528,996 ձայն կամ մասնակիցների ձայների 99.933%
Դեմ՝ 1000 ձայն կամ մասնակիցների ձայների 0.065%
Ձեռնպահ՝ 28 ձայն կամ մասնակիցների ձայների 0.002%
Անվավեր՝ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%

Ելնելով քվեաթերթիկներով կատարված քվեարկության արդյունքներից՝

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

3. Հաստատել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրության լրամշակված տարբերակը:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ /Ս.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ/

ՔԱՐՏՈՒՂԱՐ / Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ/